№ 6 Յունվարի 23 (Փետրվարի 4) 1879 Յունվարի 23 (Փետրվարի 4) № 6

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ՌՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժանտախտի մասին։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Իտալիա։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—Խառն լուրեր։ —«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԺԱՆՏԱԽՏԻ ՄԱՍԻՆ

—

Ժանտախտի պէս սարսափելի հիւանդութիւնների հայրենիքը միշտ ասիական անկարգ, անիշխանական, բարբարոս երկիրներն են եղել։ Լուսաւորված երկիրները վերջապէս պէտք է հասկանան թէ ի՞նչ վտանգ է սպառնում նրանց դորանից, որ նրանք չեն հոգում ասիական պետութիւնների մէջ կարգ և կանոն մտցնելու, չեն պարտաւորացնում այդ պետութիւնները ընդունել նոր, աւելի ազատամիտ կառավարչական ձևը, չեն ստիպում նրանց բարեկարգել իրանց դրութիւնը և վերանորոգութիւններ մտցնել իրանց վարչական կազմակերպութեան մէջ։

Հին, կլասիկային աշխարհում, կարծում էին որ իւրաքանչիւր պետութիւնը այն ժամանակ բաղդաւոր է, երբ նրա հարևանը դժբաղդ, թոյլ և անկարգ է։ Այժմեան դարում իւրաքանչիւր պետութիւնը աշխատում է որ իր հարևան պետութիւնները բաղդաւոր, բարեկարգ լուսաւորված լինեն։ Մէկի բարօրութիւնը միւսին, իր հարևանին էլ օգուտ է։

Մի պետութեան մէջ լուսաւորութեան պակասութիւնը, առուտուրի նուազվելը, փողերի գնի ընկնելը, մի որ և է հիւանդութեան ծագելը,—վնաս է իր բոլոր հարևան պետութիւններին։ Այդ պատճառով իւրաքանչիւր պետութիւն պէտք է ցանկանայ որ իր բոլոր հարևան պետութիւնները գոհ, բարեկարգ և բաղդաւոր լինեն, ծաղկած դրութեան մէջ գտնվեն, որովհետև այդ բանը իրան էլ օգուտ է։

Ցանկալի է, վերջապէս, որ լուսաւորված Եւրոպան հասկանայ այդ ճշմարտութիւնը և բոլոր եւրոպական պետութիւնները միանալով խստութեամբ պահանջեն որ Թիւրքիայի և Պարսկաստանի պէս երկիրները ընդունեն կառավարչական աւելի կանոնաւոր և ժողովրդական սահմանադրութիւն, մտցնեն լուսաւորութիւն իրանց երկիրների մէջ, իրագործեն վարչական հարկաւոր վերանորոգութիւններ։

Թող հասկանան վերջապէս որ այդ երկիրների բարբարոս, նահապետական, անկարգ դրութեան մէջ մնալուց վտանգ է սպառնում և ամբողջ լուսաւորված աշխարհին։

Եւրոպական կօնգրէսը չուզեց տալ Թիւրքաց Հայաստանին վարչական ինքնավարութիւնը, արհամարհելով այդ անն շան երկիրը և այդ աննշան ազգութիւնը։

Բայց ի՞նչ կասի Եւրոպան, երբ Թիւրքաց կառավարութեան անհոգութեան, նրա ձեռքով ներգործած բարոյական և նիւթական ճնշման և հարստահարութեան, ամբողջ պետութեան մէջ տիրող անիշխանութեան պատճառով՝ սաստիկ աղքատութիւն կը տարածվի Հայաստանում, որից կը ծագեն զանազան տարափոխիկ ախտեր, որոնք ընդարձակվելով կը սպառնան տարածվել Եւրոպայում և աւերել լուսաւորված երկիրները։

Այն ժամանակ Եւրոպան կը հասկանայ որքան անգործնական է արհամարհել ամենափոքրիկ ազգութիւնն անգամ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

2 յունվարի

Պատերազմը վերջացաւ, վերջացաւ և ալէքսանդրապօլցիների համար չահաւէտ վաճառականութիւնը։ Այժմ որ կողմ կամիս դարձիր, բայց ամեն կողմից լսվում են գանգատներ առևտրի անմխիթար դրութեան վրա։ Շատերը, որոնք հարուստ էին և կրկին հարստացան անցեալ պատերազմի ժամանակամիջոցում, ի հարկէ անտրտունջ կը լինեն, բայց ստորին դասակարգի բարոյական և նիւթական դրութիւնը գուցէ աւելի ևս վատթար վիճակին ենթարկվի և այսուհետև։ Ի՞նչու, որովհետև ինչ հեշտ միջոցներով որ ձեռք էր բերել մի քանի կոպէկներ, նա նոյն հեշտութեամբ այժմ վատնում է իր ունեցածը սարսափելի չռայլութեամբ։ Շռայլութիւններ ասելով երանի թէ այն տեսակ շռայլութիւն հասկացվեր, որ ուրիշ հայաբնակ քաղաքներում ժողովրդին շռայլ ճանաչելով դիտենք, որ նրանք այդ շռայլութիւնները անում են իրանց անտեսականութեան մէջ, ընտանիքի մէջ, այսինքն տան մէջ ուտել խմել, ինջոյքներ տալ, հրաւէրքներ անել, թանկագին շորերով զարդարվել, մօդային հետևել։ Բայց տարաբաղդաբար ալէքսանդրապօլցի հասարակ ժողովուրդը այն տեսակ շռայլութիւններ իր տանը կամ ընտանիքի մէջ չէ կատարում երբէք, այլ փողոցներում և գլխաւորապէս զինետներում։ Նրա ընտանիքը գուցէ ցամաք հացով է կշտանում, ցրտատանջ է լինում, հագուստ չունի հագին, բայց նա փողոցներում, զինետներում, առաւօտվանից մինչև գիշերները ուշ, սաղանդարներով, «գավուլ—զուռնայով» քէֆեր է անում, ուտում խմում, կեղտոտ և ամենազազիր տեսարաններ ներկայացնում, հարբելով փողոցների մի պատից միւս պատին դիպչում, ցեխերի մէջ թաւալում, բերանից ամենասարսափելի կեղտոտ հայհոյանքներ դուրս թափում չամաչելով գեղեցիկ սեռի ներկայութենից անգամ, կռիւ անում և տեղը եկած ժամանակ անխնայաբար մէկ մէկու գանակօծում։ Հիմա հարցնում ենք, այս տեսակ բարոյականութեամբ փչացած ժողովրդի վերջը ինչ պէտք է լինի, թէ ոչ վերջին չքաւորութիւն, աղքատութիւն, օրական թշուառ ապրուստի կարօտութիւն, յուսահատութիւն և այլն։ Բայց ժողովրդի բնաւորութեան հետ ծանօթ անձն սա էլ կարող է նախատեսել որ այդ չարիքը դալուց յետոյ, ժողովուրդը դարձեալ չէ խրատվելու, այլ ապագայում թէ մի անբերկրի և անսպասելի դէպք կրկին պատահի և այդ ժողովուրդին փող աշխատելու միջոց տայ այն ժամանակ անտարակոյս, կրկին չարունակելու է նոյնը ինչ որ բարեկիրթ հասարակութեան համար անտանելի է, ինչ որ օտար ազգի հասարակութիւնը խորշելով և արհամարհելով պէտք է դատէ և կշռէ։ Եւ թող այն ժամանակ յարգելի ալէքսանդրապօլցի հասարակութիւնը համոզվի ինձ հետ, որ այս ամեն չարիքների, թշուառութիւնների ստորին դասակարգի ժողովուրդին անհարազատ և անտանելի սովորութիւնների գլխաւոր պատճառը միշտ եղել է և կը լինի անկրթութիւնը և տգիտութիւնը։ Այո, տգիտութիւնն է ժողովրդին դէպի այդ տեսակ կորստաբեր անբարոյականութիւն մղողը, և այդ ժողովրդի ներկայացուցիչները, առաջնորդները և հարուստ աղաներն են մեղաւոր, որ խիստ անհոգ և անտարբեր են գտնվում միշտ դէպի ժողովրդի կեանքը, նրա ներկան և ապագան։

Ես երբէք չեմ ուրանում, որ իմ այստեղ նկարագրած ժողովուրդը չունի և չէ ունեցել իր լաւ կողմերը, բարի և ազնիւ ձգտումները. ոչ, նա նոյնպէս մեծ սէր ունի, եռանդ ունի դէպի կրթութիւնը և լուսաւորութիւնը, նա պատրաստ է միշտ իր շռայլ ծախքերի վրա աւելացնել և այն տուրքերը, որ նրանից կը պահանջվի ուսումնարանների, եկեղեցու, ընթերցարանի, թատրոնի և այլ օգտաւէտ գործերի համար։ Բայց երբ նրան դրդող չը կայ, առաջնորդող չը կայ, տուրքեր պահանջող չը կայ, այն ժամանակ ի հարկէ, ժողովուրդը ինքն իր գլխու ոչինչ չէ կարող չինել և մի լաւագոյն վիճակի մէջ մտնել։

Լուսաւորված երկիրներում լուսաւորութիւնը, գիտութիւնը, արհեստը հասարակ ժողովրդի մէջ տարածվում է շատ անգամ հարուստների միջոցներով։ Հարուստները ծախսելով անգին գումարներ հիմնում են ուսումնարաններ, համալսարաններ, արհեստանոցներ, գիտութեան և լուսաւորութեան այլ և այլ հիմնարկութիւններ, նուիրելով այդ բոլորը գլխաւորապէս ազգի ըստորին աղքատ ժողովրդի զաւակների կրթութեան համար, նրանց տգիտութենից ազատելու համար, որ ապագայ սերունդը պատուաւոր քաղաքացի լինի, զարգանայ և ազգութեան ու մարդկութեան կատարեալ տիպը ներկայացնէ։ Այնտեղ հարուստները լաւ հասկացել են, որ ամեն մի բարի գործը իր բարի օգուտը և բարի հետևանքները ունի, նաև լաւ համոզված են, որ մի ազգի ընդհանուր բարեկրթութենից կախված է և նրա ապագայ երջանկութիւնը, փառքը, անունը և պատիւը։ Ապա մեր հարուստ աղաները և բարեկիրթ իշխանները ինչու համար պէտք է չը հասկանան, չը զգան, չը համոզվեն և չը կատարեն նոյնը ինչ որ օտար ազգերի հարուստները հասկանում են, զգում են, համոզված են և կատարում են ամեն բան ժողովրդի համար իբրև սեպուհ պարտականութիւն.

Ցոյս ունեմ ընթերցողը կը համոզվի ինձ հետ, որ թէ մի բարեկիրթ, լուսաւորված, ազգային գաղափարը յարգող մարդ ազգութեան

անդամ է կոչվում, նոյնպէս էլ մի ազգ, անուս, կոպիտ, անբարոյական մարդ կարող է ազգի անդամ կոչվել։

Ուրեմն, յարգելի ալէքսանդրապոլցի աղաներ, խոստովանում եմ ուղիղ սրտով, աւելի պարզն ասել. ձեր ժողովրդի անբարոյական բնաւորութեան վրա սաստիկ խղճահարված խօսքս դարձնում եմ դէպի ձեզ, որ ինձ, օտարական հայիս համար խորթ ու անսովոր բան է թուացել, ոտքս Ալէքսանդրապոլ դրած օրից մինչև այս օր հասարակ ժողովրդի բարոյական դրութիւնը այդ աստիճան ողորմելի վիճակի մէջ տեսնել։ Եւ աւաղ չեմ կարողանում նաև զսպել գրիչս, և բացի հասարակ ժողովրդի պակասութիւնները նկարագրելու այստեղ, ստիպված եմ ասել, որ ձեր հասարակութեան առաջին և միջին դասակարգի ժողովրդի մէջ ևս գտնվում են մարդիկ, որոնք նոյնպէս նոյն սարսափելի ախտին են ենթարկված։ Սրա պատճառը ուրիշ տեղ որոնելու հարկ չը կայ, այլ միայն սարսափելի տգիտութեան մէջ։ Բայց սա էլ չեմ կարող ուրանալ, որ հասարակութեան մէջ չը կան մարդիկ, որոնք բացառութիւն լինեն կազմում։ Հարկ չը կայ ծածկելու, որ այդ ժողովրդի բոլոր անմարդավայել պակասութիւնները ձերն է, դուք էք ժողովրդի առաջնորդները ու դուք էք մեծ պատասխանատու նոր սերնդի առջև, դուք էք պարտական փողոցներում հաղարաւոր թափառաշրջիկ անմեղ մանուկների ապագային։ Այո, թէպէտ և մի ազգային հոգևոր դպրոց ունիք մօտ չորս հարիւր աշակերտներով, գաւառական ուսումնարանը որտեղ սովորում են մօտ հարիւր հայ մանուկներ, մասնաւոր անձանց ձեռքով կառավարվող պատրաստականներում ա, բ, գ, սովորով մօտ երկու հարիւր մանուկներով և դարձեալ դանազան տիրացուների խարազաններ տակ ջարդվող, սաղմոսատեր սովորող չը գիտեմ մօտ հարիւր կամ աւելի աշակերտներով, որ բոլորը մէկ տեղ ժողովել մօտ եօթը հարիւր աշակերտ կանի, որ թէ համեմատելու լինենք ուրիշ հայաբնակ գաւառական քաղաքների հայ աշակերտների թիւ հետ Ալէքսանդրապոլինը բաւական մեծ թիւ է կազմում. բայց ցաւելով պէտք է ասեմ, որ ոչ մասնաւոր նախակրթարաններում և ոչ տիրացուների մօտ փիլիսոփայութիւն սովորող աշակերտները, իրանց կրթութեամբ, բաւական չեն լինի ժողովրդի ապագայ առաջադիմութեան և բարոյական զարգացման համար։

Ալէքսանդրապոլը բուն հայոց քաղաք լինելով նա շատ շուտով բազմամարդ քաղաք կը դառնայ։ Ուրեմն թէ այժմ փողոցներում թափառող և զանազան լրբութիւն և անբարոյականութիւն սովորող մանուկների թիւը կարող է 500-ի հասնել, մի քանի տարուց յետոյ անշուշտ հազարը անց կը կենայ, վասնորոյ տարակոյս չը կայ թէ այս տեսակ մի քաղաքում մի հոգևոր դպրոց երբէք բաւական չէ ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար, այլ հարկաւոր է (թէ ոչ բարձր ուսումնարաններ ունենալ) մի ուրիշ կանոնաւոր դպրոց ևս բացվի և շարունակ կանոնաւոր կրթութիւն աւանդվի, որ ժողովուրդի ապագայ նոր սերունդը գոնէ մարդկօրէն ապրել սովորի։ Դրա համար մտածելու պարտքը առաջինը դնում եմ հոգևոր իշխանութեան վրա, որովհետև այդ ուղղակի նրա պարտականութիւնն է Ալէքսանդրապոլում մի ուրիշ հոգևոր դպրոց բաց անելու, իսկ երկրորդ պարտականութիւնն էլ ժողովուրդի մէջ ձայն ունեցող և նրա յարգանքը վայելող աղաներիդ վրա, որ դուք էլ ձեր առևտրական հաշիւներից փոքր ինչ սթափվէք (մի և նոյն է հիմայ պատերազմը վերջանալով ձեր առևտրական գործերն էլ անպատճառ թեթևացան) և մի փոքր էլ ժողովուրդի ապագայ բարօրութեան համար մտածէք։ Ուրեմն շտապեցէք խնդրել Վեհափառ կաթողիկոսից մի նոր ուսումնարան բացելու համար, իսկ դուք մինչև այն ժամանակ որոնեցէք նիւթական միջոցներ մի նոր ուսումնարանի գոյութիւնը ևս ապահովելու և պահպանելու համար։ Ահա մի միջոց, որով կարող էք մի մեծ ծառայութիւն անել ձեր հասարակութեան, առուել ազգութեան և ընդհանուր մարդկութեան։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք յօգուտ «Արարատեան ընկերութեան» Ախալցխայից 28 ռուբլ հետևեալ պարոններից. Գրիգոր Մլազարեանց 3 ր., Արշակ Ն. Տօհատանեանց 3 ր., Յարութիւն Բաղդասարեան Ղազարեանց 1 ր., Յակոբ Տէր-Մարգարեանց 1 ր., Կարապետ Պայրաքեան 1 ր., Խաչատուր Քոսեանց 1 ր., Աւետիս Զելիսկրեանց 1 ր., Աւետիս Նահապետեանց 2 ր., Յովհաննէս Ճարաչով 3 ր., Սարգիս Եղիանով 1 ր., Ի. Ի. Ք. 1 ր., Պօղոս Պետրոսեան 1 ր., Մկրտիչ Գրիգորեանց 1 ր., Տիգրան Մէփելեանց 1 ր., Յովակիմ Զթեան 50 կ., Ալէքսանդր Սողոմոնեանց 1 ր. 50 կ., Յարութիւն Յակոբեան 1 ր., Մըկրտիչ Շիրինեանց 1 ր., Ա. Տէր-Յակոբեանց 1 ր., Տիգրան Վարդանեանց 2 ր.։

—

ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան Հայոց դպրոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ յունվար ամսիս 31-ին, երեկոյեան 7 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու սառուցատունը, որ գտնվում է Ներսիսեան հին Դպրոցի նկուղումը, Պայմանների մասին կարելի է տեղեկանալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամն։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ շաբաթ օր, յունվարի 27-ին, ֆրանսիական շոգենաւ «Provincia», որի կապիտանն է պ. Բաշու (Compagnie Paquet) ճանապարհ ընկնելու է ՓՕԹԻՑ, եթէ եղանակը աջող լինի, դէպի Կ. Պոլիս և Մարսէյլ, դիպչելով Սեվաստոպոլին։

—

Ռուսաստանի ամբողջ լրագրութիւնը լի է ժանտախտի վրա լուրերով և դատողութիւններով։ Մանաւանդ «Русская Правда» լրագիրը սաստիկ պարապում է այդ հարցով։ Հարկաւոր չէ, ասում է լրագիրը մեղմացնելով հիւանդութեան անունը, ժանտախտի տեղ դիպչողական տիֆ անուանելով, հանգստացնել այդպիսով հասարակական կարծիքը։ Այդ տեսակ վարմունքը այն վնաս ունի որ մարդիկ աւելի անհոգ են դառնում։ Ինչպէս երևում է Աստրախանի նահանգում յայտնված ցաւը, ինչպէս և լինի նրա անունը, սարսափելի է։ Մարդը հիւանդանալով երկու, շատ շատ երեք ժամվայ ընթացքում է մեռնում, Աստրախանի նահանդի վարչութիւնը երբ ցաւը յայտնվեցաւ Վէտլիանկայում, ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց յայտնված հիւանդութեան վրա։ Երբ արդէն ամբողջ գիւղեր վարակվեցան, վարակված գիւղերին շրջակայ բնակիչները աջ և ձախ ցրվեցան տարածելով իրանց հետ ժանտախտը, այն ժամանակ միայն ուշադրութիւն դարձրին, բայց արդէն ուշ էր, որովհետև անհնարին էր շրջապատել կարանտինով նահանգի ահագին տարածութիւնը։ Լրագիրներից մինի թղթակիցը ասում է որ ախտը սարսափելի առաջադիմութիւն է անում. մի օրվայ մէջ նա տարածվում է 30 վերստ տարածութեամբ վարակված կէտի շուրջը։ Կան գիւղեր որտեղ 100 բնակիչներից 90 անպատճառ մեռնում են, կան գիւղեր, որտեղ բնակիչներից ոչ մինը կենդանի չէ մնում։

—

Ահա ինչպէս են նկարագրում ԱՍՏՐԱԽԱՆԻ նահանգում յայտնված ժանտախտի նշանները։ Մարդու փորի վրա, կամ թևքերի տակ ուռոյցքներ են յայտնվում սաստիկ տենդային դրութեամբ, որին շուտով հետևում է թոքերի բորբոքումը։ Սորանից յետոյ իսկոյն լինում է արիւնահոսութիւն բերանից, որին անմիջապէս հետևում են սև բիծեր ամբողջ մարմնի վրա։ Հիւանդը մեռնում է երկու, երեք ժամվայ մէջ, Ամբողջ գիւղեր Աստրախանի նահանգում կատարելապէս կորցրին իրանց բոլոր բնակիչներին և այդ գիւղերի փողոցներում դեռ հարիւրներով ընկած են չը թաղված մեռածների դիակները. Ասում են որ Աստրախանի նահանգական վարչութիւնը աշխատում էր երկար ժամանակ ծածկել իրողութիւնը և լրագիրներին հրամայված էր բոլորովին չը խօսել յայտնված ժանտախտի վրա։

—

Այսօր, յունվարի 23-ին, լինելու է ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ռուս տաղանդաւոր դերասանուհի Բրիանսկայա—Կովրովա տիկնոջ վերջին բենեֆիսը։ Երիտասարդ դերասանուհին թատրոնական ամբողջ սեզոնի ժամանակ կատարեց ամենադժուար և բազմատեսակ դերերը։ Բենեֆիսին ներկայացնելու են «Двѣ Сиротки» պիէսան։ Զենք հասկանում ինչի մեր չնորհալի արտիստուհին այդ տարվայ ընթացքում ունեցաւ թշնամիներ, բայց նրա գնահատողների թիւն էլ մեծ է և մենք յոյս ունենք որ այսօր թատրոնը լի կը լինի։ Կան դերեր որոնց մէջ տ. Բրիանսկայա աննման է, ինչպէս օրինակ Սարդուի «Ֆրու-Ֆրու» պիէսայի մէջ։

—

Յունվարի 21-ին, կիրակի օրը, կայացաւ ԹԻՖԼԻՍԻ Դումայի ժողովը քաղաքագլուխ ընտրելու դիտաւորութեամբ։ Ներկայ գտնված ձայնաւորների թիւը 66 էր, բայց քուէարկութեանը մասնակցում էին միայն 65 հոգի։ Առաջարկվեցան 17 կանդիդատներ, բայց նրանցից մեծ մասը հրաժարվելով, մնացին միայն 5 կանդիդատներ՝ այն է Ց. Թամամշեվ, Ն. Զուբալով, իշխ. Կ. Բէհբութով, իշխ. Խօջամինասով և այժմեան քաղաքագլուխ Դ. Կիպիանի։ Նրանցից ոչ մինը ձայների բազմութիւնը չը ստացաւ։ Առաջինը 65 քուէարկող ձայների վրա 21 սպիտակ քուէ ստացաւ, երկրորդ 12, երրորդ 20, չորրորդ 19 և վերջինը 13 քուէ։ Այդպիսով ոչ ոք չընտրվեցաւ քաղաքագլուխ և ընտրութիւնները յետաձգված են մինչև հետևեալ կիրակէ օր, 28 յունվարի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Հանրապետութեան թշնամիները ամենից շատ մեղադրում են կառավարութեան այդ ձևին, ասելով որ դա վնասում է կրկին նրանով, որ շրջապատող միապետական ազդերը թշնամական աչքով են նայում Ֆրանսիայի վրա, որով և երկիրը դատապարտված է միշտապէս առանձնացած ապրելու և թէ այսպէսով նա ոչ կարող է խառնվել օտար պետութիւնների գործերի մէջ, հետևաբար և ոչ էլ կարող է երկրից դուրս պաշտպանել իր սեփական շահերը, ահա այն միակ թույլ փաստը որ հանրապետական թշնամիները իրանց ամենազօրեղ զէնք են համարում. այս է եղել միշտ բօնապարտական և լեգիտիմական լրագիրների գործելու մեթոդը. Նրանք երբէք չեն դադարում ազատ Ֆրանսիային Նապոլէոններ, Բուրբոններ ու Լուդովիկոսներ առաջարկելուց, Նրանք դեռ չը կարողացան հաշտվել այն մտքի հետ, որ Ֆրանսիան խորշում է խնամակալութեան տակ ապրելուց, որ նա արդէն կատարելահասակ է, որ նա էլ երեխայ չէ, և որ հասել է վերջապէս այն բաղդաւոր ժամանակը, որ նա կամենում է իր սեփական ազատ սկզբունքներով ապրել. այսուհետև նրա մահացու թշնամիներ են բոլոր նրանք, որոնք խորհուրդ են տալիս նրան իշխանութեան տակ ապրել, նրան ատելի ու տաղտկալի են սևագլուխ մրքաւորները, որոնք օրօր կարդալով, քարոզում են նրան ստրկութեան տակ ապրել։

Վերջին ժամանակներս մինչև անգամ մի քանի ճարպիկ նուվէլլիստներ գտնվեցան, որոնք իրանց յանդգնութիւնը մինչև այնտեղ հասցրին, որ սկսեցին լուրեր տարածել թէ իբր եւրոպական պետութիւնների մէջ մի ընկերութիւն է կազմվել, այն նպատակով որպէս զի աշխատեն Ֆրանսիան միապետական իշխանութիւն դարձնեն։ Բոլոր այս յանդուգն լուրերին «Temps» լրագիրը մի, թէպէտ կարճ, բայց ազնիւ պատասխան է տալիս, նա ասում է «Մենք մինչև անգամ արժան էլ չենք համարում այսպիսի վանդալական լուրերին պատասխանել. ժողովրդի արհամարհանքը աւելի կենդանի պատասխան է։»

Միապետական կուսակցութիւնները ցանկանում են, որ Ֆրանսիան ունենայ զօրեղ և հաւատարիմ դաշնակիցներ, բացի այդ նրանք կամենում են որ եւրոպական խորհուրդներում նա նախագահ պետութիւն լինի, և նրանց կարծիքով, այդ կը յաջողի Ֆրանսիային միայն այն ժամանակ երբ նա միապետական կը լինի!... Դրանք այդքան միապետութիւն են կանչում, տեսնենք թէ միապետութիւնը ինչ առաւելութիւն տուեց Ֆրանսիային. անշուշտ, ամենքը կը խոստովանեն որ Ֆրանսիայի միապետութեան ամենամեծ մարդիկն էին Լուդովիկոս XIV, և Նապոլէոն I։ Ցիրաւի ինչքան էլ որ փառաւոր լինէին այս երկու միապետների թագաւորութիւնը, այնու ամենայնիւ նրանց երկուսի իշխանութեան հետևանքը նոյնը եղաւ, նրանց ամեն մէկի իշխանութենից յետոյ մենք տեսնում ենք, որ Ֆրանսիան, ճնշված բոլոր միացեալ Եւրոպայից, քիչ է մնում, որ աւերակ դառնայ։ Միայն հրաշք կարելի է համարել, որ մեծ թագաւորը, օգուտ քաղելով Անգլիայի փտած դրութենից և Սպանիայի դահաժառանգութեան համար եղած աւերիչ պատերազմից, կարողացաւ վերջապէս ազատել Ֆրանսիայի սահմանները, որ ինքն էլ երկար չը կարողանալով պաշտպանել, 1709-ին ստիպվեցան թողնել։ Իսկ ինչ կը վերաբերի Նապոլէօն առաջինին, ի՞նչ օգուտ բերին երկրին նրա հոյակապ հանճարը, և նրա զինուորների հերոսութիւնը. արդեօք նրա տուած օգուտն ա՞յն էր որ այդքան զոհաբերութենից յետոյ էլ, Ֆրանսիան զրկվեցաւ մինչև անգամ այն սահմաններից, որ նա ունէր 1792 թվի հանրապետութեան ժամանակ։ Ֆրանսիան երբէք այնպէս դժբաղդ և այնպէս անգթաբար խուզված չէ եղել ինչպէս նա էր երկրորդ կայսերութեան օրով։

Եւ վերջապէս մի՞թէ վերջին 1870-ի պատերազմի անաջողութիւնը միայն մի բաղդի բերմունք էր. Էլզաս Լօտարինգիայի կորուստը չէ կարելի վերաբերել միայն մի բաղդի բերմունքի, և ոչ էլ դա կարող է մի անաջող պատերազմի հետևանք համարվել։ Այդ կորուստը պատրաստվեցաւ մի երկարատև կայսրութեան սխալներով, որը Խրիմի և Իտալիայի նոր ու աննպատակ պատերազմներից յետոյ սխալանքներ սխալանքների վրա դիզելով, և ընդհանուրի շահերը անձնական կապրիզներին և զանազան շահամոլութիւններին զոհելով, առաջարկեց այդ մեծ կորստաբեր պատերազմը։

Այս բոլորից յետոյ, միապետականները դեռ էլի երես ունեն երկրի առաջ դուրս գալ և անխղճմտաբար պաշտպանել այդ տիրանների շահերը։

ԻՏԱԼԻԱ

—

Հեռագիրները հաղորդում են, որ Պասսանանտէի տուած կասացիօնական բողքը մերժվեցաւ. նրա փաստաբանը մտադիր է շուտով մի խնդիր ներկայացնելու, որի մէջ նա կաշխատէ ցոյց տալ որ Պասսանանտէն մենամոլ է (monomane)։ Եթէ այդ խնդիրը ընդունվի, պէտք կը լինի, որ մի բժշկական խորհուրդ կազմվի, որ այդ բանը քննվի, հետևաբար և գործը դեռ շատ կերկարի։

Պ. Կօպինօն, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր էր, պ. Մէցցանոտէն, որ ժողովրդական աշխատութիւնների մինիստր էր, և պ. Տաժանին, որ արդարութեան մինիստր էր, իրանց ընտրող պաշտօնակիցների և ձայների մեծ առաւելութեամբ նորից ընտրվեցին իրանց պաշտօնների մէջ։ Ասում են որ գեներալ Միդիչեի առողջութիւնը այժմ փոքր ինչ լաւ է։

Ասում են որ պապը մի շատ հարկաւոր շրջաբերական է ուղարկել բոլոր եպիսկոպոսներին, որի մէջ երկար ու բարակ խօսում է եկեղեցու պայմանների, պապութեան և հասարակութեան մասին. նա այդ շրջաբերականի մէջ ցոյց է տալիս թէ ինչ է արել նա, և թէ դեռ ինչ է մնում նրան անելու։ Այս շրջաբերականը ամբողջապէս գրված է նորին սրբութեան ձեռքով. նա շուտով կը հրատարակվի և հաւատացնում են, որ մեծ ապաւորութիւն կը գործէ։

Յունվարի 9-ին Վիկտոր Էմմանուէլի մահուան տարեդարձի առիթով, ժողովուրդը հանգուցեալի գերեզմանի վրա շատ պսակներ դրեց. այդ օրը ահագին բազմութիւն կար Պանտէօնում և բոլոր թատրոնները փակված էին։

Կաթոլիկական լրագիրները հրատարակեցին վերը յիշած շրջաբերականը. այս շրջաբերականի մէջ պապը խօսում է սօցիալական, կօմմունական և միջազգայնական հարցերի մասին։

Այդ շրջաբերականը ասում են կայծակի արագութեամբ տարածվեցաւ բոլոր երկիրներում։

ԹԻՒՐՔԻԱ

—

Վերջին լուրերին նայելով Թիւրքիայի հայերի դրութիւնը, մանաւանդ Թիւրքիայի ասիական նահանգներում, հետզհետէ անտանելի է դառնում։

Ո՞ւր են մնացել բէֆօրմների խոստմունքները, ի՞նչ եղաւ Ս. Ստեփանոյի և Բերլինի դաշնագիրների այն յօդուածները, որոնք հայերին էին վերաբերվում։ Ի՞նչ եղաւ Անգլիայի հովանաւորութիւնը։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը իր պաշտօնից հրաժարական տուեց, որովհետև այլ ևս անկարող եղաւ շարունակել կրել Հայաստանի մէջ գործված բարբարոսութիւնների համար պատասխանատուութիւնը։

Որ Թիւրքիան էլ արժանի չէ կազմակերպված պետութեան անունը կրելու,—այդ վաղուց ամենքը գիտէին։ Այն սարսափելի անիշխանութիւնը որին հասաւ այժմ այդ ողորմելի պետութիւնը, վաղուց կարելի էր գուշակել։

Բայց ի՞նչ է անում Անգլիան, որ խոստացել է հովանաւորել Փոքր-Ասիան և Հայաստանը, պարտաւորեցնել Թիւրքիային իրագործել այդ երկիրներում հարկաւոր վերանորոգութիւնները....

Ռուսաստանը նուաճելով Կարսի նահանգը հաղիւ կարողացաւ պահել Թիւրքիայի ձեռքի տակ մնացած Հայաստանի կողմերի գաղթականութիւնը, յետ դարձնել գաղթականներին իրանց հայրենիքը։ Իսկ այժմ Անգլիայի շնորհով, որ հայերին քաղաքական վերածնութիւն էր խոստացել, նոյն հայերը, ինչպէս ամեն կողմից հաղորդում են, սպիպված են կրկին գաղթել Հայաստանից ուրիշ երկիրներ։

Մի՞թէ այդ բազմաչարչար ազգի ցաւերը երբէք չեն վերջանայ։ Մի՞թէ միշտ և ամենքը նրան պէտք է խաբեն։ Մի՞թէ, ճշմարիտ, Անգլիան, ինչպէս մենք վաղուց նախադուշակեցինք, դիտաւորութիւն ունի դարձնել Հայաստանից մի նոր Հնդկաստան։

Երևում է որ թէ Թիւրքիայի և թէ Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել։ Նրանց գաղտնի դաշնադրութիւնը նրա մէջն էր կայանում որ հայերին ոչնչացնեն Հայաստանի մէջ, աքսորեն հայերին Հայաստանից։

Մեր կարծիքով Թիւրքաց հայերին մնում է այժմ մի բան անել, դարձեալ վերջին փորձ փորձել և ուղարկել Եւրոպա, եւրոպական բոլոր պետութիւնների մօտ մի նոր պատգամաւորութիւն, որի նպատակը պէտք է լինի Անգլիայի և Թիւրքիայի դէմ սաստիկ բողոք ներկայացնել, բողոքել թէ Սան-Ստեֆանօի և Բերլինի դաշնագիրները ոչ թէ միայն չեն իրագործվում, բայց որ Հայաստանի հայերի դրութիւնը աւելի վատացաւ այն ժամանակից, երբ Թիւրքիան և Անգլիան թէ թեւի տուած յանձն առան Հայաստանի հասարակական բարեկարգութեան վրա հոգալու։

Եւ այդ անիրաւութիւնները կատարվում են Թիւրքիայի և Անգլիայի ձեռքով Թիւրքիայի այն նահանգի, Հայաստանի վերաբերութեամբ, որ Օսմանեան պետութեան ամենահաւատարիմ երկիրն է, որ բնակեցրած է նրան ամենահաւատարիմ և հնազանդ ժողովրդից, հայերից։

Մարդը շուարվում է, շփոթվում է, խելագարվել կարող է, երբ տասն և իններորդ, լուսաւորված դարում պէտք է ինքն իրան հարցնի՝ ո՞ւր է ճշմարտութիւնը, ո՞ւր է արդարութիւնը, ո՞ւր է վերջապէս իրաւունքը։

Եւ նա պէտք է ինքն իրան պատասխանի կրկին իրան հետևեալ հարց առաջարկելով՝ մի՞թէ տասն և իններորդ դարի իրաւունքը միայն արիւնի մէջ է, մի՞թէ Անգլիայի պէս լուսաւորված երկրի հովանաւորութեան տակ գտնվող Թիւրքիայի հպատակ միայն այն ազգերի իրաւունքները պէտք է ճանաչվեն, որոնք անհնազանդ են եղել, ապստամբութիւն են արել։

Ուրեմն չաժէր հաւատարիմ մնալ Թիւրքիային։ Աւելի լաւ կը լիներ որ հայերն էլ սլավեանների պէս ապստամբվէին. այն ժամանակ նրանց չէր ճնշի ոչ Թիւրքիան ոչ էլ Անգլիան։

Իսկ զոհերը նոյնքան բազմաթիւ կը լինէին, ինչպէս և այժմ։

Ամէն մեր դարին, եթէ լուսաւորված աշխարհը պէտք է հասնի այն եզրակացութեանը, որ արդարութիւնը և իրաւունքը միայն արիւնի, միայն ապստամբութեան մէջ է։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 4 յունվարի

Երբ կը մտնէինք 78 տարին Պատրիարքի հրաժարականը Ազգ. ժողովոյ սեղանին վրա էր. կուգայ 79 տարին և Ներսէս սրբազանի հրաժարագիրը դարձեալ ազգային օրուան խնդիրն է։ Բայց այժմ այդ հրաժարականը հանդիսաւոր բողոք մ'է, մտածութիւն կը պատճառէ Օսմ. կառավարութեան և կը յուզէ Հայ ազգն։—Դեկտեմ. 23-ին գումարեցաւ երեսփոխանական ժողովը. մի քանի երեսփոխաններ հարցում ուղղելով կուզեն իմանալ թէ ստոյգ լրագիրներու գրածներն Ներսէս սրբազանի հրաժարման վրա. և դիւանը կը պատասխանէ թէ Պատրիարք սրբազանի կողմէ պաշտօնական տեղեկութիւն մը հաղորդուած չըլլալով առ ժողովը, հետևաբար նա այդպիսի խնդրով չէ կարող զբաղել։ Դիւանի այս պատասխանը գուցէ տարօրինակ թուի. բայց երկու օր առաջ Ներսէս սրբազան հրաւէր ընդունած ըլլալով մեծ վեզիրի կողմէ տեսակցութիւն մը ունենալ ի Դուռն, ուստի ժողովը լաւ համարեց որ այդ տեսակցութիւնն տեղի ունենայ, արդիւնքն իմացուի և ապա տնօրինէ ինչ որ արժան է։

Ժողովուրդի կողմէ դեսպանաց դիմելու պատրաստութիւններ տեսնուած էին, յունվար 31-ի համար, սակայն զանազան նկատումներով այդ ցոյցն առ այժմ ետ մնաց։

Պատրիարք սրբազանը Սպարապետ Օսման բաշայի հետ տեսակցութիւն ունեցաւ, սակայն մեծ վեզիրի հետ տակաւին չը տեսնուեցաւ։ Պատրիարքն միշտ հրաժարականին վրա կը պնդէ։ Չեմք գիտեր թէ Խայրէդդին բաշա ինչ կարող պիտի լինի ասել առ Պատրիարքն, մինչդեռ Խայրէդդին բաշա ինքն իսկ յուսահատ այս երկիրն բարեկարգելու կարող լինելէ, խնդրած է Սուլթանէն որ իւր հրաժարականը ընդունի։

Ֆանուշի վանահայր Նիկողոս եպիսկոպոսն, բանդէն հանելով ի Պատրիարքարան խրկեցին. եպիսկոպոսն պնդեց որ կամ երկու ընկերներն ալ միասին Պատրիարքարան խրկեն կամ ինքն ալ նոցա հետ ի բանտի մնայ. բայց չը լսեցին իրեն։ Դուռը կը պնդէ որ Զէյթունցիներն ամենակատարեալ ապստամբներ են. և ի Մարաշ տեղի ունեցած հարցաքննութեանց արձանագրութիւններն Պոլիս բերել կուտայ զէյթունցոց ապստամբ լինելնին ապացուցանելու համար։

Վերատին Զէյթունէն դառն լուրեր։ Երկու օր առաջ Սսոյ Կաթողիկոսի կողմէ մի հեռագիր հասաւ ի Պատրիարքարան թէ «կառավարչի կողմէ պատճառ դրուելով անկարգութիւններ տեղի ունեցան, և դարձեալ կառավարութիւնի ղօրք կը ժողովվի այս կողմերն.»

Մեզ համար անտարակուսելի է որ կառավարութիւնը Զէյթունցիներն ջախջախելու անդադար հետամուտ է։ Եւ ոմանք իբր ստոյգ կասեն թէ օտար կառավարութիւն մը այս մասին խորհրդակից է Դրան։

Օր նոր, հարստահարութեանց լուրերն նոր. Սեբաստիայէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ քիւրդերն Կովտին գիւղն պաշարելով հրացանի բռներ են զայն. սեբաստացոց խուռն բազմութիւն մը յունվարի 1-ին կը դիմէ ի Պատրիարքարան, այն միջոցին Ֆրանսայի դեսպան պ. Ֆուռնիէ նոր տարվայ շնորհաւորութեան առթիւ Պատրիարք սրբազանին եկած լինելով, ականատես վկայ կըլլայ այդ տեսարանին և կը խոստանայ ուշադրութեան առնուլ նոցա խնդիրն ինչպէս-որ զէյթունցոց ազատութեան համար աշխատել։

Յունվարի 2-ին բազմաթիւ սեբաստացիներ բողոք մատուցին առ մեծ-վեզիրն որ խոստացաւ ուշ դնել նոցա բողոքանաց։

Խեղճ սեբաստացիներ, քանի երրորդ բողոքն է որ կը մատուցանեն, և օր ըստ օրէ կը սաստկանան իրենց տառապանքներն։

Յունվարի 2-ի գիշերն խիստ կարևոր հեռագիր մը հասաւ ի Պատրիարքարան Տիգրանակերտէն. սոյն հեռագրոյն ստորագրած էին Տիգրանակերտի հայոց, հոգևոր և քաղաքական հայոց, յունաց, ասորոց և հռովմէական ասորւոց առաջնորդներն։ Սոյն հեռագիրն սրտաճմլիկ նկարագրութիւն մը կանէ քրիստոնէից վիճակին վրայ, հարստահարութիւն քիւրդերէն, հարստահարութիւն կառավարութիւնէն. ծեծ, առևանգութիւն, կուսապղծութիւն, եկեղեաց աւերում, քանդում և այլն և այլն և այլն. անաւասիկ դժբաղդ Տիգրանակերտի վիճակն։ Սղերտի շուկային մէջ արձակ համարձակ թիւրքերն կը վաճառեն եկեղեցիներէ կողոպտեալ անօթներ, զարդեր, զգեստներ։

Պատրիարքն այս հեռագիրն հաղորդեց դեսպանաց։ Առաջնորդներն կը բողոքեն նաև թէ Բումելի գաղթականներն Տիգրանակերտ փոխադրելու տրամադրութիւն ունի կառավարութիւնը։ Երէկ քաղաքական և կրօնական ժողովներն այս խնդիրներով զբաղեցան։—Բաւական խառնաշփոթ վիճակի մէջ ենք։

Երէկ պ. Լէյարդի կողմէ Պատրիարքարան խրկուած նամակ մը կը ծանուցանէ թէ քիւրդերն զսպելու համար պաշտօն ստացած Ալի Շէֆիք-պէյ, ըստ խնդրանաց Պատրիարքարանի, պաշտօնանկ եղած է, և մինչև որ նորա յաջորդն կարգուի, Էրզրումի բանակի հրամանատարն այդ պաշտօն պիտի վարէ։

Կ. Պոլսոյ մէջ հայ օրաթերթի մը պէտքն ըզգալի էր, ունենք հայ տառերով թուրք լեզուով թերթեր, բայց զմեզ չեն գոհացներ, մանաւանդ թուրքերէնի հմտութիւն չունեցողներուն. «Լրագիր» փոքրիկ օրաթերթը կայ, որ երբեմն լաւ յօդուածներ ունենալով հանդերձ, կարծես թէ ամեն միջոց ի գործ դրած է ազգին համակրութիւնը չը գրաւելու համար, հետևաբար շատ ուրախութեամբ տեսանք որ «Մասիս» 79 թուականէն սկսեալ, ամեն օր կը հրատարակուի։ Եւ այսուհետև իւր ազգային, քաղաքական և գրականական յօդուածներովն յոյս ունենք որ գոհացնէ Կ. Պոլսոյ հայ երիտասարդութիւնը և ազգային մամլոյ պատիւն բարձր պահէ։ Այսօր Կ. Պոլսոյ հայոց իբր ազգային ամենէն կարևոր թերթ «Մասիսն» է։

Դրամական տագնապը կը շարունակէ, թղթադրամը օր ըստ օրէ վարկը կորսնցնելու վրայ է։

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներկայ 1879 թվից սկսած Կ. Պոլսի «Մասիս» լրագիրը դառնալու է ամենօրեայ թերթ։ Մինչև այժմ «Մասիսը» շաբաթը երեք անգամ էր հրատարակվում և բացի փոքրիկ «Լրագրից» ուրիշ ամենօրեայ հայոց թերթ չը կար Կ. Պոլսում։

* * *

Նորերումս «Մասիս» լրագրում տպվեցաւ մեր Բերլինի աշխատակից պ. Ս. Արծրունու նամակը Բերլինից Մինաս Չէրազի մասին։ Նրա վրա յարձակումներ կային Կ. Պոլսի լրագրութեան մէջ, այժմ մեզ գրում են Կ. Պոլսից որ մեր աշխատակցի նամակը որ «Մշակից» արտատպվեցաւ «Մասիսի» մէջ «մեծ տպաւորութիւն ունեցաւ ասա և պապանձեցուց հակառակասէր զրպարտիչներուն»։

* * *

Բերլինից պ. Ա. Արծրունի մեզ գրում է «Այստեղ հրատարակվող «Deutsche Revue» ամսագրի դեկտեմբերի տետրակի մէջ մի յօդուած հրատարակվեցաւ «Armenien» (Հայաստան) վերնագրով։ Հեղինակը ինձ անծանօթ մի պարոն Ալֆրէդ Կիրխհօֆ է (Alfred Kirchhoff)։ Դեռ չեմ կարողացել ճարել տետրակը։ Կարդալուն պէս կը հաղորդեմ աւելի։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

ՓԱՐԻԶ, 18/30 յունվարի։ Մարշալ Մակ-Մահօնի հրաժարականի մասին պաշտօնապէս յայտնված է։ Ցայտարարութիւնը կախված է բօրսայի վրա։ Կօնդրէսը կանչված է այսօր, երեկոյեան 6 ժամին։ Գրէվիի ընտրվելը անտարակուսելի է։

ԿԱՏԱՐԵՆ (?), 14/26 յունվարի։ Անգլիական զօրքերի և Զուլու ցեղի մէջ պատերազմական գործողութիւններ սկսվեցան։

ՅԱՐԻՑԻՆ, 18 յունվարի։ Քաղաքի և շրջակաների մէջ ամեն բան լաւ է գնում։

ՓԱՐԻԶ, 18/30 յունվարի։ Գրէվի հանրապետութեան նախագահ է ընտրված եօթ տարով։ Այդ ընտրութիւնը կօնդրէսը ծափահարութեամբ և «կեցցէ հանրապետութիւնը» կանչելով ընդունեց,

Կ. ՊՕԼԻՍ, 19/31 յունվարի։ Կասիմ-փաշա նշանակված է ծովային մինիստր, Այնէ Էլիդ-փաշա գլխաւոր հրամանատար թնդանօթների։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 230 ր. 75 կ., երկրորդ 232 ր. 25 կ., արևելեան առաջին 92 ր. 62 կ., երկրորդ 91 ր. 75 կ., ոսկի 8 ր. 60 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա 22,94 պէնս։ Տրամադրութիւնը թոյլ է,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ մինիստրների մասնաժողովը վճռեց այրել Վինլեանկա գիւղը, բնակիչներին դուրս բերել և ուրիշ տեղ բնակեցնել, չը դուրս գալով կարանտինի շրջանից, ապահովել նրանց սպիտակեղէնի, տաք հագուստի, կերակուրի և բժշկութեան կողմից և վարձատրութիւն տալ այրված կայքի համար։ Այս միջոցները գործ դնել վարակված բոլոր տեղերում։ Առանձնացած շինութիւնները և կարանտինի ծառայութեան համար հարկաւոր եղած զօրքերը ենթարկել քաղաքային վարչութիւնների կարգադրութիւններին։ Գործադրել այս միջոցները առանց յետաձգութեան։ Այդ միջոցների իրագործումն յանձնել մի անձի, որ ընդարձակ իրաւունքներ կունենայ։ «Голосъ» լրագրին հաղորդում են որ այդ պաշտօնի համար նշանակված է կոմս Լորիս-Մելիքօվ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Վեալիանկայի, Գրիշիբի, Սարիցկու, Ուդաչնայայի և Միխայլօվկի մէջ հիւանդներ չը կան։ Սելիտրեանօ գիւղի մէջ յունվարի 17-ին մեռան չորս, հիւանդացաւ մէկ։ Կասկածաւոր ննջեցեալների սպիտակեղէնը և հագուստը այրում են։ Այրածի փոխարէն տալիս է կարմիր խաչը։ Ուղարկված բժիշկները ամեն տեսակ գովասանքից լաւ են գործում։

ՓԱՐԻԶ, 21 յունվարի (3 փետրվարի)։ Դիւֆօր երէկ յայտնեց մինիստրների խորհուրդի մէջ իր վճիռը հրաժարական տալ, ասելով, որ գործերի նոր դրութեան համար նոր մարդիկ են հարկաւոր։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ Լուր կայ, որ պետական ծախսերի պակասեցնելու համար նշանակված մասնաժողովը ի նկատի ունէ ոչնչացնել դեպարտամենտների փոխ-դիրեկտօրների պաշտօնները։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Մոսկվայի մօտ, Սերպուխովէից քսան վերստ հեռու, Վիսօկօե գիւղում ժանտախտ յայտնվեց։ Այդ լուրը հաստատել է Վիսօկօե գիւղի քահանան, որ յուզարկաւորել է Վեալեանկայից եկած հիւանդին։ Հիւանդին ոչ մի տեղ չընդունեցին և նա մեռաւ բաց երկնքի տակ։ Այդ գիւղում մի քանի մարդիկ հիւանդացան։ Մոսկվայի նահանգապետի քննութենից երևում է, որ Վիսօկօե գիւղի հիւանդութիւնը տիֆ է։ Տարափոխիկ բնաւորութիւն չէ նկատվում։ Հիւանդութեան պատճառը յայտնի չէ։

Խմբագիր Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԻԱԿ ԴԷՊՈ արծաթած, և ոսկեզոցած իրեղէնների, (սեղանի, թէյի և այլն) Կրիստոֆլ և ընկ. (Christofle et C-°) գտնվում է Թիֆլիսում, Տօլէի խանութ, Սօլօլակի № 4։

5—6

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ՐԱՅԳՕՐՕԴՍԿԻ ստացել է մեծ քանակութեամբ հայելիների ապակիներ զանազան մեծութիւնների։ Ընդունում է պատուէրներ չափազանց էժան գներով։ Նորոգում է հին և փչացած հայելիներ։ Հայելիները ծախվում են շրջանակներով և առանց շրջանակների։ Ատամանակայա փողոց, փոստի շինութեան մէջ, տուն Լօրիս-Մելիքովի։ 4—4

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Բերնար Իլիչ Միրզովիչ, որ բնակվում է Արսենալնայա Դաւի դօվսկայա փողոցների անկիւնում Միրզոեվի տանը, ԸՆԴՈՒՆՈՒՄ Է գործերի համար և առաւօտեան 8-10 ժ. և երեկոյեան 5-7։

4—3

Այս տեսաւ պ. ՅԱՐՈՅԻ բրոշիւրը—«ՀԱՑՈՑ ՄԱՄՈՒԼԸ Ռուսաստանում և Կովկասի մէջ։ Գինն է 30 կոպ. ծախվում է Թիֆլիսի ՐՈԼՈՐ գրավաճառների մօտ։ 4—4

РАСПРОДАЖА БЕЗЪ ЗАПРОСА.

По случаю прекращенія розничной торговли и открытія оптоваго склада, назначается **распродажа** по самымъ дешевымъ цѣнамъ, на 25% дешевле обыкновенныхъ цѣнъ, товаровъ: крепъ, ардаганъ, матласе, репсъ, фай. карсъ, къруасъ, кашемиръ черный отъ 75 к. до 2 р. 30 к. альпага черный отъ 35 к. до 75 к. шали суконныя отъ 3 р. 25 к. до 7 р. 35 к., ковры бархатные, тикъ холщевый, рубашки полотняныя, и т. п. Въ каравансараѣ Тамамшева, верхній этажъ, противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11 магазиннъ **Малакова.**

2—4

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գտնվում էր Գօլովինսկի պրոսպէկտի վրա Սարաջևի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրոսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլիի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցեողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

23—25

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻԼՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԹԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունենամ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս և գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

29—75

ԹԻՖԼԻՍ հիւրանոցում Դը-վօրցօվայա փողոցի վրա, Սարաջևի տան պատրաստվում են ԲԼԻՆՆԵՐ յունվարի 17-ից առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 4 ժամը։ Մուտքը բաղից է։

1—4

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковани № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհի կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հասցէն, Սարաքալաքչիեսկայա փողոց, տուն Չիկովանի, № 10

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р.. на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ-близь гостинницы „Кавказъ" и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ"

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году ***Тифлисскій Вѣстникъ*** будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію ***Тифлисскаго Вѣстника.***

ՅՈՒՆՎԱՐԻ 23. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունվարի 22-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրինի »	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	6	80
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը թուշի . . .	8	—
» թարաքամի .	4	10
Ալիւր Շորագալու . .	1	80
» Երևանի, . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ . .	190	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաբը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիմանի . . .	23	—
» մարտինիկօյինը	18	—

ՀՆԴԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւ.
Փոթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլովո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . , .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վիներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վիներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և մզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վիներական և կաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—Մ. ԶԱՐԱՔԼԻՍԱ. ***. Նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում։

—ԵՐԵՒԱՆ. Ա. Ե. Հոգևոր դպրոցի ուսուցիչները հրաժարական են տուել։ Այդ գիտենք։ Գրեցէք մեզ մի մանրամասն նամակ այդ անցքի առիթով։ Մենք չենք կասկածում, որ դուք անկողմնապահ կը լինէք։

—ՓԱՐԻԶ. Ա. Ա. Ձեր նամակի մէջ փող չը կար։ Ո՞ւմից խմբագրութիւնը պէտք է բաժանորդական վճարը ստանայ Cafè Soufflet' ի համար։

—ԹԻՖԼԻՍ. Գ. Ս. Ասում էք որ եթէ պրէմիան ձեզ է ընկնելու, պէտք է ընծայէք հայոց թատրոնական գործին։ Ձեր կամքն է, դուք կարող էք ինչ կամենաք անել պրէմիայի հետ։ Ձեր դիտաւորութիւնը գովելի ենք գտնում։

Дозволено Цензурою 22 Января 1879 г. Тифлисъ Տպարան Գ. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца